

**Տեղեկանք**

**2012 թվականի գերակա խնդիրների և միջոցառումների տարեկան իրականացման արդյունքների**

<b>Միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ</b>				
<b>Պատասխանատու մարմինը</b>	<b>Ծրագրի կետը</b>	<b>Միջոցառումների անվանումները</b>	<b>Միջոցառումների կատարման արդյունքները</b>	<b>Կարծիք</b>
1	2	3	4	5
<p>«Հ տարածքային կառավարման նախարարություն»</p>	<p>Հավելված1, կետ1</p>	<p>«Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (աղբահանության և նախադպրոցական հաստատությունների գործունեության մասով) իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>Մշակվել, շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցվել է «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (աղբահանության և սանիտարական մաքրման, նախադպրոցական հաստատությունների գործունեության մասով), իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքների մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն՝ 28.09.2012թ. թիվ 03/16/5039-12 գրությամբ</p> <p>Մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի 08.11.2012թ. նիստում ՀՀ մարզերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման ուսումնասիրությունների արդյունքներն ընդունվել են ի գիտություն:</p>	
	<p>Հավելված1, կետ2</p>	<p>«Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (պարտադիր, պետության պատվիրակած, կամավոր՝ տարանջատման տեսանկյունից, հաշվի առնելով միջազգային փորձը) շրջանակի ընդհանուր բնութագրին առնչվող օրենսդրական դաշտի գնահատման և ուսումնասիրության արդյունքներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>Մշակվել, շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցվել է «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակի ընդհանուր բնութագրին առնչվող օրենսդրական դաշտի ուսումնասիրության և գնահատման արդյունքների մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն՝ 28.09.2012թ. թիվ 03/16/5033-12 գրությամբ:</p> <p>Մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի 10.10.2012 թ. նիստում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակի ընդհանուր բնութագրին առնչվող օրենսդրական դաշտի ուսումնասիրության և</p>	

<p>Հավելված1, կետ3</p>	<p>Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատակարգի մշակում</p>	<p>գնահատման արդյունքներն ընդունվել են ի գիտություն:</p> <p>Գործընթացը իրականացնելու նպատակով սահմանված ժամկետում ընդունվել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների օրինակելի աշխատակարգը հաստատելու մասին» N 115-Ա հրամանը, որի վերաբերյալ տեղեկատվությունը 2012թ. սեպտեմբերի 26-ի թիվ 03/15/4990-12 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Սույնով հաստատվել է խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների օրինակելի աշխատակարգ:</p>	
<p>Հավելված1, կետ4</p>	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N 562-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 1-ի թիվ 1381-Ն որոշմամբ կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որի հիման վրա ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. դեկտեմբերի 20-ի թիվ 07-Ն հրամանում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացում: Այն 26.11.2012թ. թիվ 03/15/6233-12 գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննության և ստացել է պետական գրանցում: Փոփոխությունների հիման վրա գնահատող մարմինների ցանկում ավելացել է նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը:</p> <p>Միաժամանակ կատարվել է նաև փոփոխություն՝ «Մարզում համայնքի ղեկավարի աշխատակազմում աշխատավարձի պարտքի առկայությունը» գործառույթը փոխարինվել է «Տեղական տուրքերի հավաքագրումով» աշխատավարձի պարտքերի մարման պատճառով:</p> <p>Սույն փոփոխությամբ կատարելագործվել է ՀՀ մարզպետների կողմից կատարվող աշխատանքների գնահատման համակարգը:</p>	

<p>Հավելված1, կետ5</p>	<p>Հայ-ռուսական երկրորդ միջտարածա- շրջանային ֆորումի նախապատրաս- տում և անցկացում</p>	<p>2012թ. հոկտեմբերի 13-ին տեղի ունեցավ հայ- ռուսական միջտարածաշրջանային երկրորդ համաժողովը «Հայաստան և Ռուսաստան. միջտարածաշրջանային երկխոսություն-2012» խորագրով: Համաժողովի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի և Ռուսաստանի պետական իշխանության կենտրոնական և տարածաշրջանային մարմինները, հասարակական կազմակերպությունները, փորձագիտական և գիտական շրջանակները, ՁԼՄ-ները ներկայացնող ավելի քան 300 մարդ, համաժողովի ընթացքում մասնակիցները քննարկեցին միջտարածաշրջանային առևտրատնտեսական և հումանիտար համագործակցության հետագա ընդլայնման, տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում, ինչպես նաև Եվրասիական տարածքում ինտեգրվելու գործընթացներում Ռուսաստանի և Հայաստանի փոխգործության հարցեր: Համաժողովի մասնակիցները որոշեցին անց կացնել հայ-ռուսական միջտարածաշրջանային երրորդ համաժողովը 2013 թվականին: Համաժողովի շրջանակում ստորագրվեցին մի շարք փաստաթղթեր: Համաժողովի անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը 2012թ. հոկտեմբերի 18-ի թիվ 03/19/5454-12 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:</p>	
<p>Հավելված1, կետ6</p>	<p>2013 թվականին ԵԽ-ում Հայաստանի նախագահության ստանձնման հետ կապված ՀՀ տարածքային կառա- վարման նախարարության մասով միջոցառումների ծրագրի նախա- պատրաստում</p>	<p>2013 թվականին ԵԽ-ում Հայաստանի նախագահության ստանձնման հետ կապված՝ ՀՀ տարածքային կառա- վարման նախարարությունը մշակել և սահմանված կարգով ՀՀ արտաքին գործերի նախարարություն է ներկայացրել (22.10.2012թ. թիվ 03/19/5494-12 գրությամբ) ՀՀ տարածքային կառավարման նախարարության իրավասության շրջանակներում նախատեսվող միջոցառումների ծրագրի նախագիծը: Միջոցառումների ծրագրի նախագիծը 2012թ. հոկտեմբերի 25-ի թիվ 03/19/5540-12 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:</p>	
<p>Հավելված1, կետ7</p>	<p>«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ</p>	<p>Մշակվել և շահագրգիռ մարմինների հետ քննարկվել են «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում</p>	

		<p>օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղիների տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը: Նախագծերի փաթեթը 2012թ. դեկտեմբերի 27-ի թիվ 03/16/6960-12 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:</p>	
<p>Հավելված1, կետ8</p>		<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1003-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1003-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 29.11.2012թ. թիվ 03/17/6314-12 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն, որին ի պատասխան ՀՀ կառավարության աշխատակազմի դեկավարը 12.12.2012թ. թիվ 02/24.1/18016-12 գրությամբ, ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, խնդրել է նշված նախագծին անդրադառնալ «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումից հետո: Նշված օրենքի նախագիծը ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է 1-ին ընթերցմամբ (փաստաթղթի կոդը՝ <u>Կ-022-20.07.2012-SS-010/1</u>):</p>	
<p>Հավելված1, կետ9</p>		<p>«Գյուղական համայնքների 2-րդ համաժողովի նախապատրաստման և անցկացման, համաժողովի օրակարգին և ժամանակացույցին հավանություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարության «Գյուղական համայնքների 2-րդ համաժողովն անցկացնելու հետ կապված ծախսերի համար Հայաստանի Հանրապետության տարածքային</p>	

		<p>տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը  ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>կառավարման նախարարությանը գումար հատկացնելու մասին» որոշման և «Գյուղական համայնքների 2-րդ համաժողովի նախապատրաստման և անցկացման, համաժողովի ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավարության քննարկմանը 19.09.2012թ. թիվ 03/16/4889-12 գրությամբ:</p> <p>Ս.թ. հոկտեմբերի 5-6-ին Ջերմուկ քաղաքում անց է կացվել գյուղական համայնքների 2-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցում էին պետական կառավարման մարմինների, համայնքների հետ աշխատող տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Յուրաքանչյուր մարզ մասնակցում էր մարզպետի գլխավորությամբ առանձին պատվիրակությամբ, որի կազմում ընդգրկված էր թվով տասը համայնքապետ:</p> <p>Համաժողովի ընթացքում կազմակերպվեցին բանախոսություններ և քննարկումներ՝ հետեւյալ վեց թեմատիկ աշխատանքային խմբերում.</p> <ol style="list-style-type: none"> <li>1.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսային քաղաքականության ընդհանուր մեթոդաբանության ձեւավորում;</li> <li>2.Տեղական եկամուտների վարչարարության խնդիրները;</li> <li>3.Տեղական տնտեսական զարգացումը եւ տեղական իշխանությունների դերը;</li> <li>4.Տարածքային համաչափ զարգացում, առաջանցիկ մեխանիզմների մշակում, հրատապ ծրագրերի ամփոփում;</li> <li>5.Կոշտ կենցաղային թափոնների կառավարումը Հայաստանում;</li> <li>6. Տեղական ժողովրդավարություն, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն:</li> </ol> <p>Միջոցառումը նպատակ ուներ տեղական ինքնակառավարման համակարգի և գյուղական համայնքների ամենաարդիական խնդիրների քննարկման, փորձի փոխանակման, իրականացվող</p>	
--	--	--	---	--

			<p>ծրագրերի և քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը:</p>	
	<p>Հավելված1, կետ10</p>	<p>«Հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի նիստի ընթացքում ներկայացվել է «2012 թվականի փետրվարի 12-ի հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (N 110-Ն, 02.02.2012թ.):</p> <p>ՀՀ կառավարության հունիսի 22-ի նիստի ընթացքում ներկայացվել է «Արմավիրի մարզի Այգեկի, Գայի, Աղավնատան, Մրգաշատի, Փշատավանի, Առատաշենի, Ջրարբիի, Այգեվանի, Նորավանի համայնքների ղեկավարների, Գեղարքունիքի մարզի Այրքի համայնքի ղեկավարի, Լոռու մարզի Խնկոյանի համայնքի ղեկավարի, Սարամեջի, Սարչապետի համայնքների ղեկավարների և ավագանու անդամների, Ահնիձորի համայնքի ավագանու անդամների, Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքի ղեկավարի, Վայոց ձորի մարզի Գետափի համայնքի ղեկավարի և ավագանու անդամների՝ 2012 թվականի հուլիսի 8-ի հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:</p> <p>Ստորև ներկայացվում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ 2012 թվականին կայացած ընտրությունների համառոտ վերլուծությունը:</p> <p>ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածին համապատասխան սահմանված հետևյալ օրերին կայացել են տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններ՝ փետրվարի 12-ին, հուլիսի 8-ին, սեպտեմբերի 9-ին և սեպտեմբերի 23-ին:</p> <p>2012 թվականի ընթացքում (առ սեպտեմբերի 27-ը) թվով 749 համայնքում կայացել է համայնքի ավագանու անդամների, իսկ 697 համայնքում՝ համայնքի ղեկավարի ընտրություն:</p> <p>Վերոնշյալ ընտրությունների արդյունքում որպես համայնքի ղեկավար ընտրվել է թվով 11 կին (1,58%),</p>	

			<p>պաշտոնում վերընտրվել է թվով 550 (78,91 %) համայնքի ղեկավար, թվով 147 (21,09%) համայնքի ղեկավար ընտրվել է առաջին անգամ, որից 14-ը՝ քաղաքային համայնքներում:</p> <p>Հատկանշական են նաև հետևյալ փաստերը: ՀՀ ընտրական նոր օրենսգրքի 143-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ «Եթե հավասար թվով առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են երկու և ավելի թեկնածուներ, ապա ընտրված թեկնածուին որոշելու համար նրանց միջև անցկացվում է վիճակահանություն:» Երկու համայնքներում (ՀՀ Արմավիրի մարզի Խորոնքի և ՀՀ Վայոց ձորի Գլաձորի) համայնքի ղեկավարի առավելագույն քվեներ ստացած թեկնածուներն ունեցել են հավասար քվեներ: Նույն հոդվածի մեկ այլ պահանջի (թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետում գրանցված թեկնածուների թիվը պակաս է 2-ից) արդյունքում ՀՀ Արագածոտնի մարզի Արևուտի և Յամաքասարի համայնքներում համայնքների ղեկավարների ընտրությունները համարվել են չկայացած և այնտեղ անցկացվել են նոր ընտրություններ:</p>	
--	--	--	---	--

**Գերակա խնդիրների իրականացման արդյունքների վերաբերյալ**

<b>Պատասխանատու մարմինը</b>	<b>Ծրագրի կետը</b>	<b>Գերակա խնդիրները</b>	<b>Գերեկա խնդրի կատարմանն ուղղված քայլերը</b>	<b>Կարծիք</b>
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	<u>Հավելված N 2</u> կետ1.	<p><b>Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսային քաղաքականության ընդհանուր մեթոդաբանության ձևավորում</b></p> <p>- Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի, օբյեկտիվ կարիքների ուսումնասիրություն և դրա հիման վրա, ըստ համայնքների մեծության, ծախսային կառուցվածքների տիպաբանության մշակում:</p>	<p>Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի, օբյեկտիվ կարիքների ուսումնասիրության և դրա հիման վրա, ըստ համայնքների մեծության, ծախսային կառուցվածքների տիպաբանության մշակման նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը համագործակցել է «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության</p>	

		<p>-ՀՀ պետական բյուջեից համայնքներին հատկացվող դոտացիաների սահմանված չափորոշիչների վերանայում նվազագույն չափի մասով:</p>	<p>հայաստանյան ներկայացուցչության հետ: Վերջինս ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության» (ՔՀՏԻԱ) քառամյա ծրագրի շրջանակներում դրամաշնորհային ծրագիր է հայտարարել, որտեղ հաղթող է ճանաչվել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ն: ՀՖՄ-ն ՀՀ տարածաքային կառավարման նախարարության հետ իրականացրել է մեթոդաբանության մշակման աշխատանքները:</p> <p>21.12.2012թ. տեղի է ունեցել մեթոդաբանության հանրային քննարկում՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Մշակված փաստաթուղթը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն:</p> <p>«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ գործող օրենքի համաձայն՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների չափը ըստ առանձին համայնքների բյուջեների հաշվարկվում է՝ վերջիններս տարանջատելով 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների և 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների: Արդյունքում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող բոլոր համայնքները ստանում են հավասարաչափ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին տվյալ տարվա օրենքով: Մինչույն ժամանակ, հանրապետության 33 համայնքներում, որոնք ունեն 300-ից ավելի բնակչություն, 2012թ. համար նախատեսված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը պակաս է 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների համար սահմանված գումարից: Նշված խնդիրները կարգավորելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:</p>	
--	--	--	---	--



	<p><b>Հավելված N 2</b> <b>կետ2.</b></p>	<p><b>Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունների պարզեցում, հստակեցում և գործող ընթացակարգերի բարելավում:</b></p> <p>- օրենսդրության այն դրույթների վերհանում, որոնք կարգավորում են տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունները և շփումները - առաջարկությունների ներկայացում՝ տեղական ինքնակառավարման մարմիններ – գործարար հարաբերությունների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմիններից վարչական կախվածության գործոնն էականորեն նվազեցնելու կամ պարզեցնելու ուղղությամբ (տարատեսակ թույլտվություններ և համաձայնեցումներ)</p>	<p>«Վ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ստորաբաժանումների կողմից ՏԻՄ-գործարար հարաբերությունների բարելավման համար վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնց համար իրականացվել են հետևյալ գործառնությունները՝</p> <p>1. Վերլուծվել է գործող օրենսդրությունը ՏԻՄ-ի մասով, որի արդյունքում պայմանականորեն դասակարգվել են տեղական ինքնակառավարման մարմիններ-գործարար շփումները ըստ 4 տեսակների (թույլտվություններ, համաձայնեցումներ, կառավարչական որոշումներ, հաշվետվություններ-տեղեկանքներ), ինչպես նաև ըստ ոլորտների (քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, հողօգտագործման, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների), վեր են հանվել «Վ օրենսդրության այն դրույթները, որոնց կատարելագործումը կարող է նվազեցնել տեղական ինքնակառավարման մարմիններ-գործարար հարաբերությունների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմիններից վարչական կախվածության գործոնը:</p> <p>2.Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՏԻՄ-գործարար հարաբերությունները կարգավորվում են տարբեր ոլորտների օրենսդրությամբ՝ նպատակահարմար է գտնվել, որ այդ ոլորտների լիազոր պետական մարմինները «Վ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ ներգրավվեն օրենսդրության վերլուծության և դրա բարեփոխման գործընթացի մեջ: Այդ նպատակի համար մշակվել է հարցաշար: Հարցաշարում ներառված հարցերը, մեր կարծիքով, հնարավորություն կնձեռնեն ունենալ լիարժեք պատկերացում տարբեր ոլորտային օրենսդրություններում ՏԻՄ-գործարար</p>	
--	---	---	---	--

		<p>- առաջարկությունների ներկայացում՝ տեղական ինքնակառավարման մարմիններ – գործարար հարկային վարչարարության ոլորտի բարելավման վերաբերյալ (տեղական հարկերի մասով)</p>	<p>հարաբերություններին վերաբերվող դրույթների թերի կամ լավ կողմերի մասին:</p> <p>3. Նախնական ուսումնասիրությունների արդյունքները և նշված հարցաշարը ներկայացվել են ՀՀ վարչապետին, որից հետո ՀՀ վարչապետի հանձնարարականով ՀՀ քաղաքաշինության, ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ մշակույթի, ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ սպորտի և երիտասարդության, ՀՀ կրթության և գիտության նախարարներին, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահներին ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մշակված հարցաշարը և վերջիններին առաջարկվել է վերլուծել ոլորտային օրենսդրության դրույթները ու դրա արդյունքում լրացնել հարցաշարերը, համագործակցելով ՀՀ տարածքային կառավարման նախարարություն հետ:</p> <p>4. Վերոնշյալ հարցաշարի պատասխանները ստացվել են, դրանք վեր են լուծվել նախարարությունում՝ շահագրգիռ պետական մարմինների պատասխանատուների մասնակցությամբ: Վերլուծությունից հետո 29.10.2012թ. թիվ 03/16/5639-12 և 06.12.2012թ. թիվ 03/16/6432-12 գրություններով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ ՏԻՄ-գործարար հարաբերությունների պարզեցման, հստակեցման և գործող ընթացակարգերի բարելավման վերաբերյալ առաջարկությունների փաթեթ:</p> <p>Նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տեղական տուրքերի և վճարների հայեցակարգ»-ի նախագիծը:</p> <p>Անհրաժեշտություն է առաջացել այն կրկին անգամ քննարկել ՀՀ ֆինանսների և արդարադատության</p>	
--	--	--	--	--

			<p>նախարարությունների հետ:</p> <p>Վերջիններիս հետ քննարկումների արդյունքում լրամշակված նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:</p> <p>Սույն հայեցակարգի ընդունման արդյունքում ակնկալվում է հստակորեն սահմանել և տարանջատել «տեղական տուրքեր» և «տեղական վճարներ» հասկացությունները, վեր հանել տեղական տուրքերի և վճարների հետ կապված ՀՀ օրենսդրությունում առկա թերություններն ու բացերը, միատեսակ մոտեցում ցուցաբերել տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրանց դրույքաչափերը սահմանելիս, հստակեցնել ՏՄ-երի լիազորություններն այդ հարցում:</p> <p>Այս տարի ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվեց «Հողի հարկի և գույքահարկի գծով առաջացած ապառքների մասին» և դրա հետ թղթակցվող ՀՀ օրենքների փաթեթը: Օրինագծերի կիրառումը կնպաստի ավելի իրատեսական համայնքային բյուջեների կազմմանը, համայնքների բյուջետավարման գործընթացի հստակեցմանը, հողի հարկի և գույքահարկի բազաների ճշգրտմանը:</p>	
	<p><b>Հավելված N 2 կետ3.</b></p>	<p><b>Տարածքային զարգացման հայեցակարգից բխող նոր գործիքակազմի ձևավորում</b></p> <p>-մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանության ամբողջացում տեղեկատվական բազայի համալրման մասով</p>	<p>Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Միավորված Ազգերի Կազմակերպության Ջարգացման ծրագրերի համատեղ համագործակցության արդյունքում վերանայվել և թարմացվել են «Համայնքների տիպաբանության զարգացում» ծրագրի տեղեկատվական բազայի մոտ 600 ցուցանիշներ: Տեղեկատվական բազայում ներառված 12 ցուցանիշներով համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ամփոփ գնահատման մեթոդաբանության հիման վրա հաշվարկվել է համայնքների աղքատության գնահատման մոդիֆիկացված համաթիվը: Գնահատելով տեղեկատվական բազայի կարևորությունը ՀՀ ՏԿՆ-ի կողմից մշակվել և</p>	

		<p>-տարածքներում ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին կատարվող ներդրումների արդյունավետության հաշվարկում՝ աղքատության մոդիֆիկացված համաթվի միջոցով</p> <p>-մարզային զարգացման ծրագրերի իրականացման ընթացիկ և տարեկան արդյունքների գնահատում և աղքատության նվազման վրա այդ գնահատականների ազդեցության հաշվարկում</p> <p>-տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման</p>	<p>շրջանառության մեջ է դրվել համապատասխան կարգ՝ որով սահմանվում է տեղեկատվական բազայի շարունակական թարմացման նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքներից վիճակագրական տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման ընթացակարգերը:</p> <p>Միաժամանակ նկատի ունենալով վիճակագրական տվյալների մատչելի և արդյունավետ օգտագործելու անհրաժեշտությունը նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ «Համայնքային տիպաբանություն» ծրագրի տեղեկատվական բազան «Արմոնիսֆո» ծրագրի գործիքակազմով շահագործելու ուղղությամբ, որը հանդիսանալով վիճակագրական վերլուծությունների համար ավելի լայն հնարավորություն ընձեռնող ծրագիր՝ կհեշտացնի համապատասխան վերլուծություններ իրականացնելու հնարավորությունները:</p> <p>ՀՀ 2012թ. պետական բյուջեով և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ մարզերին հատկացված գումարների հիման վրա կատարվել է կապիտալ ներդրումների ազդեցության գնահատում համայնքներում աղքատության մակարդակի նվազման վրա:</p> <p>Կատարվել է մարզային զարգացման ծրագրերի իրականացման ընթացիկ և տարեկան արդյունքների գնահատում: Հաշվետվությունների հիման վրա կատարել է համայնքներում աղքատության նվազման վրա գնահատականների ազդեցության հաշվարկ:</p> <p>Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել տարածքային զարգացման</p>	
--	--	--	---	--

		մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	հայեցակարգից բխող նոր գործիքակազմի ձևավորման շրջանակներում տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ առաջարկությունները: Ձևավորման գործընթացում ուսումնասիրվել են եվրոպական երկներում գործող հիմնադրամների փորձը: Կազմակերպվել են նաև ուսումնական այցելություններ Ուկրաինա և Վրաստանի Հանրապետություն՝ վերջինիս տարածքային զարգացման հիմնադրամի փորձը առավել մանրամասն ուսումնասիրելու նպատակով:	
--	--	--	---	--